



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի *Տապի 30-ի N 35-Կ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 25/1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով, 25-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի նոյեմբերի 26-ի «Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 25/1 որոշման հավելվածի 2-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 26-րդ կետով.

«

26	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե	Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման և կադաստրի համակարգի գործունեության ապահովում, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչում, երաշխավորում և պաշտպանություն	10-րդ վարչություն
----	--	---	-------------------

»:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈՒՅԱՆ